

# ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

## ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ.**— Հայաստանը հարուստ է հին ճարտարապետության նշանավոր հուշարձաններով։ Ռեսպուբլիկայի տերիտորիայում ներկայումս կա ավելի քան 750 հուշարձան։ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Շինարարության և ճարտարապետության պետական կոմիտեի հուշարձանների պահպանության և վերականգնման օրգանները խոշոր աշխատանք են կատարում հայ հին ճարտարապետության հուշարձանների վերականգնման ուղղությամբ։

Վերջերս ավարտվեց 7-րդ դարի ամենից արժեքավոր հուշարձաններից մեկի՝ Արթիկի մոտակայքում գտնվող Լմբաթավանքի եկեղեցու վերականգնումը։ Խաչաձև հատակագծով պատրաստված այդ շենքն ունի գեղեցիկ ներդաշնակություն և ճարտարապետական ձևերի համամասնություն։ Վերականգնվեցին դրսի ու ներսի պատերը, թմբերը, քարածածկ տանիքը և գմբեթը։

Այս տարի լիովին ավարտվեց նաև Արգինա 6—7-րդ դարերի եկեղեցու վերականգնումը։

Ճարտարապետական շատ հուշարձաններ են պահպանվել Ալավերդու շրջանում։ Դրանցից առանձնապես աչքի է ընկնում Հաղպատի վանքը, որի վերականգնումը շուտով կավարտվի։

Նորից իրենց նախկին տեսքն են ստացել Ծաղկաձորի 10—13-րդ դարերի հայ հին ճարտարապետության շարք հուշարձանները։

1955 թվին սկսվեց հին Հայաստանի քաղաքացիական ամենից հետաքրքրական շենքերից մեկի՝ այսպես կոչված Սելիմի քարվանսարայի վերականգնումը։ Միջնադարյան այդ նշանավոր իջևանի (13—14-րդ դարեր) վերականգնման աշխատանքները կավարտվեն 1956 թվականին։

Հիմնովին վերականգնվում են նաև Մշկավանքը (Նոյեմբերյանի շրջան), Մարմաշենի վանքը (Ախուրյանի շրջան) և 10—13-րդ դարերի այլ հուշարձաններ։

**ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ԳԱՌՆԻՈՒՄ.**— Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, ժողովրդի կենցաղի և կուլտուրայի ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեն նյութական կուլտուրայի տվյալները։

Հնագիտական նյութերի վերջերս կատարված ուսումնասիրություններից պարզվում է, որ Գառնիի էնեոլիթյան մարդու տնտեսության մեջ (3-րդ հազարամյակ մ. թ. ա.) մեծ տեղ է գրավել անասնապահությունը (պեղումների ժամանակ հայտնաբերվել են ձիու, ոչխարի, այծի, խոզի ոսկորներ), երկրագործությունը, մասամբ նաև որսորդությունը (վայրի ոչխար, այծ, նապաստակ)։

Բրուտագործության զարգացման վառ ապացույց է էնեոլիթյան կերամիկան՝ գեղեցիկ օրնամենտներով և սրբատաշ լավ պահպանված սև փայլով։

Արժեքավոր լավագույն նմուշների շարքը կարելի է դասել 2-րդ հազարամյակի (մ. թ. ա.) զունազարդ կարասը, որի կարմիր ֆոնի վրա սև գույնով նկարված են չորս այծեր և լողացող բադիկներ։

Հին Հայաստանի պատմության և կուլտուրայի ուսումնասիրության համար բացառիկ մեծ նշանակություն ունեն Գառնիի անտիկ շրջանի հուշարձանները ու պեղումներից հայտնաբերված նյութերը։ Գառնիի ամրոցը և տաճարը հայկական հելլենիստական ճարտարապետության հոյակապ կոթողներից են։ Հիանալի է առանձնապես մոզաիկան, կանաչ ֆոնի վրա բազմերանգ գույներով նկարված են հեթանոսական աստվածներ, ջրահարսեր, ձկներ և ձկնորսներ։

Հատուկ ուշադրության է արժանի ամրոցի պեղումների ժամանակ հայտնաբերված կանացի տերրակոտայե արձանիկը, որի վրա շատ գեղեցիկ քանդակված են հագուստի ծալքերը։ Գտնվել են նաև գործիքներ, զենքեր, տարբեր տեսակի կավամաններ, զարդեր և այլն։

Հետաքրքիր են դամբարաններից հայտնաբերված նյութերը։ Դրանց մեջ կան զենքեր, զարդեր, ապակե անոթներ, կավամաններ։

Մեծ հաշակով և բարձր արվեստով են պատրաստված ապակե անոթները, որոնք իրարից տարբերվում են ձևով, մշակման տեխնիկայով։ Կան սափորաձև, կոլբայաձև, ակոսավոր և բազի թաթիկների ձևի կանթերով անոթներ։ Ուշադրության արժանի է հատկապես անոթներից մեկը՝ մանիշակագույն,

ժանդրահեր աղյուս գիմանկարով: Ուշագրավ են նաև գտնված դրամները (Օգոստոս կայսեր և Հռոմեական ուրիշ իշխողների պատկերներով):

Հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ առաջին դարում Գառնիի բնակիչները շրջազգեստի վրայից թիկնոց են Հագել, որն ամրացրել են բրոնզե գնդասեղով, իսկ կոշիկները ոտքերին ամրացրել են ոլորով: Կանայք մազերը ոլորել են գլխի շուրջը և ամրացրել ոսկրե վարսակալ-քորոցներով:

Գառնիում հայտնաբերված մետաղյա իրերը, կավե խեցեղենը, ապակեղենը և զանազան նյութերից պատրաստված իրերն ու զարդերը ցույց են տալիս, որ, բացի շինարարական արհեստներից, այդ ժամանակ Հայաստանում զարգացած են եղել նաև մետաղագործությունը, կավագործությունը, ապակեգործությունը, ջուլհակությունը: Նոր գտնված նյութերի թվում կան նաև հարևան երկրներից ներմուծված իրեր (ապակեղեն, եգիպտական պաստայից պատրաստված ուլունքներ, ծովային խեցիներ):

Հնագիտական նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ միջնադարյան բնակչության կենցաղում մեծ տեղ է գրավել կերամիկան: Գառնիի բրուտագործները արտադրել են տարբեր տեսակի և որակի կավամաններ՝ սկսած կենցաղային նշանակություն ունեցող թրեղաններից, կճուճներից մինչև կավե խաղալիկները և հացահատիկի ու գինու հսկա կարասները:

Հարևան երկրների հետ ունեցած առևտրական կապերի մասին են խոսում Գառնիում գտնված արաբական, բյուզանդական, սելջուկյան, վրացական և մոնղոլական դրամները, ինչպես նաև Ռեյի (Իրան) հախճապակին, չինական ճենապակին:

Հատկանշական է, որ Գառնիի պեղումների ժամանակ հայտնաբերված նոր նյութերը, որոնք արդեն թանգարան են տեղափոխվել, կօգնեն մեր պատմաբաններին, հնագետներին և արվեստագետներին՝ լուծելու Հին Հայաստանի կուլտուրայի և պատմության մի շարք կարևորագույն հարցեր:

ՎԱԽՏԱՆԳ ԱՆԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԸ.— Անանյանի ծննդյան 50-ամյակը նշելու համար Հայաստանի սովետական գրողների միության դահլիճն էին հավաքվել գրողներ, գրականագետներ, ընթերցողներ, մամուլի և հասարակական այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ներկա գտնվողները բուռն ծափերով դիմավորեցին գրողի մուտքը դահլիճ: Հանդիսավոր երեկոն ներածական ջերմ խոսքով բացեց գրող Ստեփան Զորյանը, որից հետո գրականագետ Ս. Աղաբաբյանը զեկուցեց Վ. Անանյանի կյանքի և գրական գործունեության մասին:

Երեկոյում հոբելյարին ողջունեցին հուզիչ խոսքեր ասացին մայրաքաղաքի գրական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Պատասխան խոսքով հանդես եկավ հոբելյարը:

Վ. Անանյանի անունով Միության տարբեր քաղաքներից և առանձին մարդկանցից ստացվել էին բազմաթիվ հեռագրեր:

Երեկոյի վերջում տրվեց համերգ:

ՈՒՐՈՒԳՎԱՅԱՑ ՏՈՒՐԻՍՏՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Նոյեմբերի 25-ից Երևանում էին գտնվում մի խումբ ուրուգվահայ տուրիստներ: Հյուրերը եղան Երևանի արդյունաբերական ձեռնարկություններում և կուլտուրական հիմնարկներում, Արզնի կուրորտում, Սևանա լճում, Էջմիածնում և հանրապետության մյուս տեսարժան վայրերում: Նրանք ներկա գտնվեցին Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 35-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստին:

Մեկնելուց առաջ տուրիստները զրույց ունեցան Հայաստանի հեռագրական գործակալության թղթակցի հետ:

Մոնտեվիդեո քաղաքի մթերավաճառ Այնխարդս Կազեսյանը պատմեց.

— Չնայած որ մենք ապրում ենք Հայաստանից հեռու, մեր իղձերն ու խոհերը նրա հետ են: Հայ ժողովրդի հաջողությունների մասին մենք իմանում ենք թերթերից ու հանդեսներից: Սակայն վերջիններս ամենևին էլ լրիվ չափով ցույց չեն տալիս այն մեծ վերափոխությունները, որ տեղի են ունեցել Սովետական Հայաստանում: Այն ամենը, ինչ տեսանք, զգալի չափով գերազանցեցին մեր ակնկալությունները:

Ես այցելեցի նաև Հոկտեմբերյանի շրջանի այն սովխոզը, որտեղ աշխատում են մի քանի տարի առաջ Սովետական Հայաստան եկած աղբերս, եղբայրս ու փեսաս: Ես նրանց հետ մի քանի երջանիկ օր անցկացրի նրանց հարկի տակ, գողտրիկ բնակարանում, ականատես եղա նրանց նոր կյանքին: Ինձ թվում է, որ ամենից ուրախալին այն է, որ մարդ, աշխատանք արթնանալով, գիտե որ մշտական աշխատանք ունի:

Զրույցին մասնակցեց նաև Մոնտեվիդեոյի ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետի ուսանող Հարություն Երկանյանը:

— Ես ապագա ճարտարապետ եմ,— ասաց նա,— և ինձ առանձնապես հետաքրքրեցին բնակելի ու հանրային շենքերը: Ուզում եմ նշել, որ սովետահայ շինարարներն ու ճարտարապետները հոյակապ շենքեր են կառուցել: Ես մեծ բերկրանքով ականատես եղա, թե նրանք ինչպիսի ճաշակով են կառուցում Երևանը, որքան լավ է հատակագծված քաղաքը: